ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

02 նոյեմբերի 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Ալիխան Համեյանը, Ջալիլ Խուդոյանը, Ֆայզո Ալիյանը

Համայնքի ղեկավարի իրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ռոստամ Բրոյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի ղեկավար՝ Արամ Խուդոյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2026 թվականի նոյեմբերի 2-ի N 9 հերթական նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի Ռյա Թազա վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու մասին,

2.Ալագյազ համայնքի Ռյա Թազա վարչական բնակավայրի Երևան-Վանաձոր մայրուղի 63-64 կմ 11 հասցեում գտնվող հողամասը, բնակելի տունը և ավտոտնակը ուղիղ վաճառքով՝ առանց մրցույթի, օտարելու մասին,

3.Ալագյազ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության համար մրցույթ հայտարարելու մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Մ. ԿՆՅԱԶՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 33)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՌՅԱ ԹԱԶԱ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածը, Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը և Ռյա Թազա վարչական բնակավայրի ղեկավարի միջնորդագիրը, Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի Ռյա Թազա վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 47.868 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերը 2027 թվականի գյուղատնտեսական տարին (այսինքն մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ) թողնել նախկին վարձակալների կամ նրանց ժառանգների ենթակայության տակ՝ համաձայն հավելվածի:
2.Վարձավճարները գանձել ըստ գործող պայմանագրերի:
3.Համայնքի ղեկավարին նշյալ քաղաքացիների հետ կնքել մեկ տարով պայմանագիր նախորդ վարձակալների կամ նրանց ժառանգների հետ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Մ. ԿՆՅԱԶՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 34)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՌՅԱ ԹԱԶԱ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՐԵՎԱՆ-ՎԱՆԱՁՈՐ ՄԱՅՐՈՒՂԻ 63-64 ԿՄ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂԻՂ ՎԱՃԱՌՔՈՎ՝ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ, ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշումով և հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ալագյազ համայնքի Ռյա Թազա վարչական բնակավայրի Երևան-Վանաձոր մայրուղի 63-64 կմ 11 հասցեում գտնվող 02-092-0008-0011 կադաստրային ծածկագրով 0.049805 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, օրինական ճանաչված բնակելի տունը և ավտոտնակը ուղիղ վաճառքով օտարել առանց մրցույթի Խանմ Միրոյի Մխոյանին (ծնված 15.12.1963թ.):
2.Որոշման կատարման պատասխանատվությունը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Արամ Խուդոյանին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Մ. ԿՆՅԱԶՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ

որոշումն ընդունված է. *(Որոշում N 35)*

ԼՍԵՑԻՆ

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի հիման վրա համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկը, ինչպես նաև Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Թույլատրել մրցույթային հանձնաժողովին Ալագյազ համայնքի Ալագյազ վարչական բնակավայրում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող 02-006-0101-0032 կադաստրային ծածկագրով 2.4 հա գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի համար հայտարարել վարձակալության մրցույթ 25 տարի ժամկետով, մեկնարկային վարձավճարը 1 հա-ի հաշվով սահմանել տարեկան 9000 (ինը հազար) ՀՀ դրամ:
2. Մուծվող նախավճարի 5%-ի չափով:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Մ. ԿՆՅԱԶՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 36)*

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՆԶՈՐ ՇԱԲՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՍԵՐԺԻԿ ՄՈՒՐԱԴՈՎ

Համայնքի ղեկավար

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

Նիստն արձանագրեց՝ Արամ Խուդոյանը